Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական
միջազգային կենտրոնի տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019Թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

Ներգնա և արտագնա շարժունություն

- 2019թ. հունվարի 22-ին Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր Ժան Պիեռ Ջեսսելը դասախոսություն է կարդացել ԳԿՄԿ Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնում /1 ՊԿ/
- 2019թ. մարտի 22-ին Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի պրոֆեսոր Ժոզիան Մոթեն դասախոսություն է կարդացել ԳԿՄԿ Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնում /1 ՊԿ/:
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի Սննդի շղթայի ռիսկերի գնահատման կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար Մելինե Բեգլարյանը 2019թ. փետրվարի 2-ից մինչև 28-ը էրազմուս+ ծրագրով գտնվել է Տուշայի համալսարանում (Իտալիա)՝ կարդալով դասախոսություններ և կատարելով գիտագործնական աշխատանքներ/1 ՊԿ/:
- 2018-2019 ուս տարվա առաջին կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Գործարար վարչարարության» ամբիոնի 4 մագիստրանտ ուսանել են Իտալիայի Տուշայի համալսարանում:
- 2018-2019 ուս տարվա առաջին կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Արևելագիտության» ամբիոնի 2 մագիստրանտ ուսանել են Իտալիայի Բոլոնիայի համալսարանում:
- 2018-2019 ուս տարվա առաջին կիսամյակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի 2 մագիստրանտ ուսանել է Իտալիայի Տուշայի համալսարանում:
- 2019թ. մարտի 30-ից ապրիլի 7-ը «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի 5 դասախոս և ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին պետը մասնակցել են ՄԵՆՎԻՊՐՈ էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրի ուսումնական այցին/1 ՎԿ, 5 ՊԿ/:
- 2019թ. ապրիլի 7-10-ը SS բաժնի ղեկավար Արմեն Սարգսյանը, ՈԱ բաժնի ղեկավար Նարինե Վարդանյանը և գիտքարտուղար Ատոմ Մխիթարյանը մասնակցել են Երիտասարդական աշխատողների կրթության կարողությունների զարգացման «InYous-Միջազգային երիտասարդական հետազոտություններ» ծրագրի ամփոփիչ ժողովին:
- 2019թ. ապրիլի 10-ին և 11-ին Տուշայի համալսարանի դասախոս Պավել Մալիժենկովը անցկացրեց սեմինար-վերապատրաստում ԳԿՄԿ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոսների, իսկ ուսանողների համար կարդաց բաց դասախոսություն /1

ՊԿ/:

- 2019թ. ապրիլի 11-ին,12 և 15-ին Տուշայի համալսարանի դասախոս Սոնյա Մելկիորեն անցկացրեց սեմինար վերապատրաստում ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի դասախոսների, իսկ ուսանողների համար կարդաց բաց դասախոսություն /1 ՊԿ/:
- 2019թ.ապրիլի 8-12-ը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի դասախոս Նարինե Մանուկյանը Լեհաստանի Դաբրովա Գուրնիչայի միջազգային համալսարանում դասախոսություններ անցկացրեց /1 ՊԿ/:
- 2019թ. ապրիլի 23-ից 29-ը ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը, «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոսներ Դավիթ Պիպոյանը, Գայանե Ներսիսյանը և Վահագն Մուրադյանը այցելեցին Կրակովի մանկավարժական համալսարան /3 ՊԿ և 1ՎԿ/:
- 2019թ. 13-29 Չինաստանի Պեկին քաղաքում Չինաստանի գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպվել էր "Workshop in Frontiers of Psychology" խորագրով աշխատաժողով, որին մասնակցում էին աշխարհի շուրջ 40 պետությունների ներկայացուցիչներ: Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում էր ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հոգեբանության ամբիոնի դասախոս Անժելիկա Այվազյանը/1 ՊԿ/:
- 2019թ. մայիսի 6-ից 10-ը Կրակովի մանկավարժական համալսարանի աշխարհագրության և կենսաբանության ֆակուլտետի դասախոս Յոհաննա Զավիշսկան անցկացրեց հանդիպումներ և մասնագիտական դասախոսություններ /1 ՊԿ/:
- Նեապոլի Ֆրիդրիխ 2-րդի անվան համալսարանը և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնը ստորագրել են համագործակցության համաձայնագիր, որի շրջանակներում Նեապոլի Ֆրիդրիխ 2-րդի անվան համալսարանի (Իտալիա) «Երկրի, Շրջակա միջավայրի և օգտակար հանածոների մասին գիտությունների» բաժին ուսանողներ՝ Անտոնիո Առուտան (ասպիրանտ) և Լուիջի Ամմիրատին (մագիստրանտ) երեք ամիս ուսանել են և ձեռք բերել համապատասխան փորձառություն:
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Բոլոնիայի համալսարանի միջև իրականացվող Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրով ս. թ. մայիսի 6-21-ը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասախոս Կարոլինա Սահակյանը գտնվում էր Բոլոնիայի համալսարանում (Իտալիա) /1 ՊԿ/:
- 2019թ. մայիսի 16-26-ը ԳԿՄԿ պատվիրակությունը այցելել է Տուշայի համալսարան (Վիտերբո, Իտալիա) դասախոսություններով և վարչական այցերով /2 ՊԿ, 10 ՎԿ/:
- 2019 թ. մայիսի 24-ին ԳԿՄԿ-ն հյուրընկալել էր Թուլուզի Ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի և Պոլ Սաբատիե համալսարանի գործընկերներին /4 ՎԿ /:
- 2019թ. հունիսի 11-13-ը «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնը հյուրընկալեց Լեհաստանի Դաբրովա Գուրնիչա միջազգային համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Ռաֆալ Ռեբիդասին /1ՎԿ /:
- 2019թ. հունիսի 17-23-ին ԳԿՄԿ-ում զեկուցումներով հանդես եկավ Բոլոնիայի համալսարանի (Իտալիա) պրոֆեսոր Ջուզեպպե Չեչերեն /1ՊԿ/:

- 2019թ. հունիսի 15-21 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնը հյուրընկալեց Տուշայի համալսարանի պրոֆ. Ռաֆաել Կազային /1ՊԿ /:
- 2019թ. հունիսի 21-27ը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի վարչական և դասախոսական անձնակազմը պաշտոնական այցով այցելեցին Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Թուլուզ 3) համալսարան /3ՊԿ, 3ՎԿ /:
- 2019թ. հուլիսի 15-19 ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնը հյուրընկալեց Տուշայի համալսարանի պրոֆ. Թոմասի Կիտիին /1ՊԿ /:
- 2019թ. հուլիսի 21-23 ՄԵՆՎԻՊՐՈ էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրի ուսումնական այցին Մարտին Լյութերի համալսարանի Երկրաբանական գիտությունների և աշխարհագրության ինստիտուտում, Գերմանիա /2ՊԿ/:
- 2019թ. օգոստոսի 11-17–ը «Prom - international mobility of PhD students and academic staff ծրագրի շրջանակներում» ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ Տաթև Շահինյանը գտնվում էր Լեհաստանի WSB համալսարանում:

ԳԱՑ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2015	2016	2017	2018	2019
Պայմանագրերի թիվը	14	18	25	24	33
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	1	6	11	15	37

ԳԱՑ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ

	2015	2016	2017	2018	2019
Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ	0	9	12	6	13

Ցուցանիշ 6.3 Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը

	2015	2016	2017	2018	2019
Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվ	0	8	2	14	8*
ԳԿՄԿ-ում սովորող օտարերկրյա ուսանողների թիվ					2

*Բացի այդ, 2015-2019թթ. Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին մասնակցել են՝

- ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի 6 ասպիրանտ
- ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների 4 ասպիրանտ

<u>Բաժնի կողմից կազմակերպված միջոցառումներ</u>

- 2019թ. հունվարի 14-ին ԳԿՄԿ ուսանողները, որոնք էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրով 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակ ուսանելու են Տուշայի համալսարանում, Իտալիա, հնարավորություն ունեցան հանդիպել ծրագրի համակարգող Անժելա Ֆաթորեթթիի հետ:
- 2019թ. հունվարի 21-ին ԳԿՄԿ արտաքին կապերի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիպում ԳԿՄԿ տնօրենի, ԳԿՄԿ վարչակազմի և ամբիոնի վարիչների մասնակցությամբ, ովքեր հավաքվել էին՝ իրենց բարեմաղթանքը հղելու ԳԿՄԿ ուսանողներին, որոնք էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրով 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակը ուսանելու են եվրոպական համալսարաններում:
- 2019թ. ապրիլի 16-ին Հայաստանում էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակը իրականացրեց ԳԿՄԿ-ում գործող երկու խոշոր միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի (Թուլուզի համալսարանի հետ (Ֆրանսիա) և Տուշայի համալսարանի հետ (Իտալիա)) մշտադիտարկումը:
- 2019թ. ապրիլի 10-ին Սոնյա Մելկիորեն /Տուշայի համալսարան, Իտալիա/ մասնագիտական վերապատրաստում անցկացրեց ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի դասախոսների համար՝ «Երկխոսությունների կիրառումը աութենտիկ համատեքստում», «Մեդիա շնորհանդեսների կիրառումը՝ որպես լեզվի ուսուցման գործիք» և «Տարբեր առոգանությունների ուսումնասիրությունը լեզվի համատեքստում» թեմաներով:
- 2019թ. մայիսի 10-ին Յոհաննա Զավիշսկան /Կրակովի մանկավարժական համասարան, Լեհաստան/ սեմինար-վերապատրաստում անցկացրեց օտար լեզուների ամբիոնի դասախոսական կազմի համար՝ ներկայացնելով մասնագիտական անգլերենի ուսուցման խնդիրները, մեթոդաբանությունը և լուծման ուղիները բնական գիտություններում:
- 2019թ. մայիսի 14-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպան Մուհամեդ Էիզա Ալ-Զաաբին հյուրընկալվեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում (ԱԻ): Հանդիպման ընթացքում քննարկվեցին գիտության և կրթության ոլորտում հնարավոր համագործակցության եզրերը:
- 2019թ. հունիսի 11-13-ը ԳԿՄԿ-ը հյուրընկալեց Լեհաստանի Դաբրովա Գուրնիչա միջազգային համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Ռաֆալ Ռեբիդասին: Հանդիպման նպատակն էր ամրապնդել և խորացնել երկու համալսարանների միջև առկա կապերը, մասնավորապես մշակել կրկնակի դիպլոմով ծրագրերի շնորհման նախագիծը:
- 2019թ. սեպտեմբերի 17-ին «Հեռավար ուսուցում և տեխնոլոգիաներ» քառամսյա մասնագիտական վերապատրաստման ծրագիրը բարեհաջող ավարտած ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասախոսներին հանձնվեցին հավաստագրեր:

  «Հեռավար ուսուցում և տեխնոլոգիաներ» մասնագիտական վերապատրաստման

ծրագիրը կազմակերպվել և իրականացվել էր ԳԿՄԿ տեղեկատվական տեխնոլոգիաների, արտաքին կապերի և որակի ապահովման բաժինների համատեղ ջանքերով:

- 2019թ.նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Էրազմուս+ կարողությունների զարգացման ՄԵՆՎԻՊՐՈ ծրագրի մշտադիտարկումը Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի կողմից էկոկենտրոնում տեղակայված ԳԿՄԿ Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում:

<u>Բաժնի կողմից մասնակցած միջոցառումներ</u>

- 2019թ. նոյեմբերի 7-ին և 8-ին Հայաստանում կայացան Էրազմուս+ ծրագրի ամենամյա տեղեկատվական օրերը: ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը ներկայացրեց Էրազմուս+ նմանատիպ ծրագրերի «շահագործման» ուղիները, մասնավորապես նշեց, թե ինչպես են կրեդիտային շարժունության ծրագրերը նպաստում Գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդվող առարկաների թարմացմանը, ինչպես նաև Գիտությունների ազգային ակադեմիայում կատարվող հետազոտությունների միջազգայնացմանը:
- 2019թ. նոյեմբերի 25-26-ը Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (ՀՊՏՀ) անցկացվեց «Բուհերում աշխատակազմի միջազգային շարժունության խթանումը» խորագրով տարածաշրջանային սեմինարը: ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը ներկայացրեց անձնակազմի շարժունության ձեռքբերումներն ու մարտահրավերները ԳԿՄԿ տեսանկյունից:
- 2019թ. դեկտեմբեր 20-ին ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանը մասնակցեց ԱՓՇՏԱԿ-ի կողմից կազմակերպված «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ. քաղաքականություն և պրակտիկա; Փախստականների որակավորումների ճանաչում» վերապատրաստմանը:
- 2019թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն հյուրընկալեց ԹՈՒՄՈ լաբորատորիաների նախագծերի ավագ ղեկավար Բահարե Ֆաթեմիին, որին նաև մասնակցեց ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանը: Հանդիպման ընթացքում նախանշվեցին ԳԿՄԿ և ԹՈՒՄՈ լաբորատորիաների համագործակցության հեռանկարները և ուղիները:

<u>Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր</u>

«Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» կարողությունների զարգացման Էրազմուս+ ծրագիր՝

Հաշվետու տարում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝

- Ձեռք է բերել գերժամանակակից էլեկտրոնային մանրադիտակ ԳԿՄԿ «Բնապահպանության և բնօգտագործում» ամբիոնի համար
- Կատարվել է ԳԿՄԿ «Բնապահպանության և բնօգտագործում» մագիստրոսական

կրթական ծրագրի դասընթացների բենչմարքինգ գործընկեր համալսարանների դասընթացների հետ:
Ծրագրի վեբէջ՝ https://www.isec.am/modernization-of-environment-protection-studies-programmes-for-a

- Իրականացվել է ՀՀ-ում բնապահպանական կրթության ՍՎՈԹ վերլուծություն:
2020թ. հունվարից ԳԿՄԿ-ն մասնակցում է կարողությունների զարգացման նոր Էրազմուս+ ծրագրին՝ «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT)

Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր

Միջազգային հուշագրեր և համաձայնագրեր

- Կնքվել է միջազգային գիտաժողովի անցկացման հուշագիր ԳԿՄԿ-ի լեզվաբանության ամբիոնի և Եվրասիական կիրառական լեզվաբանության միության միջև:
- Կնքվել է գիտական և կրթական համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի և Նեապոլի Ֆեդերիկո 2-րդի անվան համալսարանի միջև, Իտալիա /Իտալիա/
- Կնքվել է գիտական համագործակցության գծով փոխըմբռնման հուշագիր ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կենսաինֆորմատիկայի խմբի և Պոտսդամի համալսարանի քիմիայի ինստիտուտի միջև /Իտալիա/
- Կնքվել է գիտական համագործակցության գծով փոխըմբռնման հուշագիր ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի և Լիսաբոնի տեխնիկական համալսարանի միջև /Պորտուգալիա/
- Կնքվել է գիտական համագործակցության գծով փոխըմբռնման հուշագիր ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի և Մարտին Լյութերի Հալլե Վիթենբերգ համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետի միջև /Գերմանիա/
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր ԳԿՄԿ-ի և Նեապոլի Ֆեդերիկո 2-րդի անվան համալսարանի միջև /Իտալիա/
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում կնքվել է միջինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Կրակովի մանկավարժական համալսարանի միջև /Լեհաստան/
- Կնքվել է կրթական և գիտական համագործակցության եռակողմ հուշագիր ԳԿՄԿ-ի, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի և Կրակովի գյուղատնտեսական համալսարանի միջև /Լեհաստան/:
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում կնքվել է միջինստիտուցիոնալ համաձայնագիր ԳԿՄԿ-ի և Կրակովի

գյուղատնտեսական համալսարանի միջև /Լեհաստան/:

<u>Ներպետական հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր</u>

- ***<u>Առկա չէ</u>***

<u>Մշակված փաստաթղթեր՝</u>

- Կազմվել է ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգայնացման գործընթացի և ծրագրերի հարցաթերթիկների արդյունքների ամփոփման վերաբերյալ հաշվետվություն
- Մշակվել է ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարության նախագիծը

<u>Հաշվետու տարում բաժինը՝</u>

- պատրաստել, թարգմանել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքում է տեղադրել 74 նորություն և 20 հայտարարություն, որը կազմում է ԳԿՄԿ վեբկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 80%-ը:
- օժանդակել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ հանդիսացող ԳԱԱ 1 ասպիրանտ ՀՀ-ում բնակվելու մեկ տարվա ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հետ կապված հարցերում:
- աջակցություն է ցուցաբերել ինչպես Էրասմուս+ ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ից Իտալիա մեկնող ուսանողների (մագիստրատուրա և ասպիրանտուրա) երկարատև վիզաների ձեռք բերման գործընթացին, այնպես էլ աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար կարճաժամկետ վիզաների ձեռք բերման գործընթացին /Ընդհանուր թիվը՝ 27/:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին պետ՝ Ա. Հարությունյան

30.01.2020թ.